






[ԵՐԵՎԱՆԻ ՀԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԽԱՐԱՄՆ]



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՉԼՍ-ԳՆԻՔԻ ԲԵՌՈՒԹԱԳՐԻՋՆԵՐԸ



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Իրականացվել է «Համացանցային զանգվածային լրատվամիջոցներ.
ձևավորումը և զարգացումը Հայաստանում» թեկնածուական
ատենախոսության հետազոտության շրջանակներում

Արմեն Ավետիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՉԼՄ-ՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ (ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ)

Երևան
ԵՊՀ հրատարակչություն
2015

ՀՏԴ 659
ԳՄԴ 76.0
Ա 791

***Հրապարակության է երաշխավորել
ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտետի
գիտական խորհուրդը***

Խմբագիր՝ Բ.Գ.Ք., Ն. Ն. Մարտիրոսյան

Ավետիսյան Ա. Ռ.

Ա 791 Հայաստանի համացանցային ՁԼՄ-ների բնութագրիչները: Հետազոտություն/Ա. Ռ. Ավետիսյան- Եր.: ԵՊՀ հրատ., 2015, 88 էջ:

Հետազոտությունը իրականացվել է «Համացանցային զանգվածային լրատվամիջոցներ. ձևավորումը և զարգացումը Հայաստանում» թեկնածուականատենախոսության շրջանակում:

Այս հետազոտությունն ուղղված է հայկական համացանցային ՁԼՄ-ների բնութագրիչների ուսումնասիրությանը և թույլ է տալիս կազմել դրանց մանրամասն նկարագիրը:

Հարկ է նշել, որ մինչ օրս Հայաստանի համացանցային ՁԼՄ-ների տարբեր բնութագրիչների բազմակողմանի և ամբողջական հետազոտություն չի իրականացվել, և սա նմանատիպ առաջին նախաձեռնությունն է:

Հետազոտությունը օգտակար կարող է լինել բուհերի ժուռնալիստիկայի ֆակուլտետների և բաժինների ուսանողների, ասպիրանտների, դասախոսների, համացանցային լրատվամիջոցների ներկայացուցիչների, ՁԼՄ-ների ոլորտով զբաղվող մասնագիտական կազմակերպությունների և առցանց լրագրության ժամանակակից խնդիրներով հետաքրքրված ընթերցողի համար:

ՀՏԴ 659
ԳՄԴ 76.0

ISBN 978-5-8084-2043-4

© ԵՊՀ հրատ., 2015
© Ավետիսյան Ա., 2015

Բովանդակություն

Նախաբան	5
Հայաստանի համացանցային ՁԼՄ-ների բնութագրիչները	6
Ընտրանքային համախմբության կազմումը	6
Մեդիաքարտի (հարցաթերթի) նկարագրությունը	8
Առցանց ՁԼՄ-ների չափման ինդիկատորների տիպականացումը	11
Տվյալների ստացման մեթոդները	14
Հետազոտության արդյունքների վերլուծությունը	14
Հետազոտության եզրակացությունները	70
Օգտագործված գրականություն	72
Հավելված 1	73
Հավելված 2	79

Նախաբան

Համացանցի ստեղծմամբ հիմք դրվեց հասարակության զարգացման բոլորովին նոր շրջափուլի մեկնարկին, որն այսօր արդեն ամրագրվել է «տեղեկատվական հասարակություն» եզրույթով: Առաջին համակարգչային ցանցի ստեղծումը թվագրվում է 1969 թ.-ին ԱՄՆ-ում «Advanced Research Projects Agency»-ի կողմից 4 համակարգիչներ կապող էլեկտրոնային ցանցի ստեղծմամբ, դրանից հետո աշխարհի զարգացած երկրներում միմյանցից անկախ տեխնոլոգիական նորամուծությունները հնարավորություն տվեցին 1989 թ.-ին հիպերտեքստային փաստաթղթի տեխնոլոգիայի մշակման համար:

Համացանցի ստեղծումը ժամանակագրական առումով համընկավ զանգվածային լրատվամիջոցների ճգնաժամային շրջանի հետ, և այս երկու գործոնների համընկման խաչներուկում ձևավորվեցին համացանցային զանգվածային լրատվամիջոցները և համացանցային լրագրությունը:

Հայաստանը, չնայած 1990-ական թվականներին երկրում անբարենպաստ տնտեսական և սոցիալական գործոնների ներգործությանը, գրեթե անմիջապես միացավ միջազգային տեխնոլոգիական գործընթացներին, զուգահեռաբար զարգացում ապրեցին նաև առցանց լրատվամիջոցները: 1990-ականների կեսերին ստեղծվեցին հայկական առցանց լրատվական կայքերի առաջին նախագծերի փորձերը: Չնայած այդ շրջանից մոտ 2 տասնամյակ է անցել, այս ընթացքում զանգվածային լրատվության համակարգում էական փոփոխություններ են տեղի ունեցել, որտեղ զգալի է նաև համացանցի ազդեցությունը, սակայն Հայաստանում ոլորտի ամբողջական և համակողմանի ուսումնասիրություններ առայժմ արված չեն:

Հայաստանի արդի լրատվական դաշտում համացանցային ՁԼՄ-ների դերակատարումը դժվար է գերազնահատել՝ հաշվի առնելով համացանցային հասանելիության բարձր ցուցանիշները, լսարանի ընդգրկվածությունը և հասարակական ազդեցիկության մեծացող չափերը:

Հենց այս միտումները նկատի ունենալով՝ 2014 թ. թվականի մայիս-հուլիս ամիսների ընթացքում իրականացվեց Հայաստանի առցանց լրատվամիջոցների բնութագրիչների բազմակողմանի հետազոտություն:

Հայաստանի համացանցային ՁԼՄ-ների բնութագրիչները

Համացանցային ՁԼՄ-ները՝ որպես տեղեկատվության աղբյուր, 21-րդ դարասկզբից աստիճանաբար սկսեցին թափանցել զանգվածային լրատվության դաշտ, և այսօր ընդգրկում ազդեցություն ունեն ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում:

Այս հետազոտությունն ուղղված է հայկական առցանց ՁԼՄ-ների փոխկապակցված բնութագրիչների ուսումնասիրությանը և թույլ է տալիս դրանց մանրամասն նկարագիր կազմել: Հարկ է նշել, որ մինչ օրս համացանցային ՁԼՄ-ների տարբեր բնութագրիչների բազմակողմանի և ամբողջական հետազոտություն Հայաստանում չի իրականացվել, և սա մնանատիպ առաջին նախաձեռնությունն է:

Հետազոտությունն իրականացվել 2014 թ. մայիս-հուլիս ամիսների ընթացքում, իսկ դաշտային աշխատանքները՝ 2014 թ.-ի հունիսի 12-ից մինչև հուլիսի 8-ը:

Ընտրանքային համախմբության կազմումը

Հետազոտության ընտրանքը որոշելիս հիմք է ընդունվել հայկական առցանց ռեսուրսների վարկանիշավորման circle.am¹ կայքի «Լուրեր և լրատվամիջոցներ» բաժնում գրանցված ՁԼՄ-ների ցանկը, որն ըստ 2014 թ. մայիսի 17-ի տվյալների ներառում էր 231 անուն լրատվական ռեսուրս: Բացի այդ, circle.am-ի մյուս բաժիններից ընտրվել են իրենց բովանդակությամբ առցանց լրատվամիջոցի բնութագրիչներին համապատասխանող կայքեր: Իսկ հետազոտության դաշտային աշխատանքների ընթացքում ցանկն ամբողջացվել է նշված ժամանակահատվածում գործող այլ կայքերով, որոնք ընդգրկված չեն եղել նշված ռեսուրսի ցանկերում: Քանի որ հետազոտության հիմնական համախումբը փոքր էր և սահմանված ժամանակահատվածը թույլ էր տալիս նպատակահարմար է համարվել համատարած ընտրանքային համախմբություն կազմելու:

Նախապես պլանավորված էր ընտրանքային համախմբության

¹ 2014 թ. հոկտեմբերի 16-ից նախագիծը սառեցվել է:

մեջ ներառել միայն «.am» դոմենային տիրույթի կայքերը, սակայն գլխավոր համախմբության միավորների ցանկը կազմելիս պարզ դարձավ, որ կան նաև «.org», «.com», «.tv» և այլ տիրույթների կայքեր, որոնք առաջատար դերակատարում ունեն Հայաստանի առցանց լրատվության ոլորտում, ուստի այս առումով ևս ընտրանքը համատարած է եղել:

Circle.am կայքի «Լուրեր և լրատվամիջոցներ» բաժնից 2014 թվականի մայիսի 17-ին դուրս է բերվել 231 կայքի հղում, առցանց լրատվամիջոցի բնութագրիչներին համապատասխանող ևս 33 կայք դուրս է բերվել «Արվեստ, մշակույթ և պատմություն», «Համակարգիչներ և ինտերնետ», «Սփյուռք և ՀՀ դեսպանատներ», «Զվարճանք և հանգիստ», «Երեխաներ և դեռահասներ», «Մարդիկ, բլոգներ և անձնական», «Պորտալներ, ֆորումներ և հատուկ», «Սպորտ և առողջություն» բաժիններից: Հետազոտման ենթակա կայքերի ցանկը կազմելիս դիտարկվել են վարկանիշավորման այլ համակարգեր ևս, սակայն դրանցում գրանցված կայքերն ավելի սակավաթիվ են եղել և հիմնականում համընկել են Circle.am-ի տվյալների հետ: Ընտրանքային համախմբության ևս 19 միավոր դուրս է բերվել դաշտային աշխատանքի ընթացքում:

Այնուհետև կազմված ցուցակից դուրս են բերվել ամսագրերի, առցանց խանութների, գովազդային գործակալությունների, կազմակերպությունների պաշտոնական էջերը, տարբեր ծառայություններ առաջարկող կայքերը, որոնք, թեպետ գրանցված էին Circle.am-ի «Լուրեր և լրատվամիջոցներ» բաժնում, սակայն չեն համապատասխանում զանգվածային լրատվամիջոցի բնութագրին:

Նախապատրաստական փուլում որոշվել էր բլոգները ևս ընդգրկել հետազոտության ընտրանքի մեջ, սակայն ուսումնասիրության ընթացքում դիտարկելով նշված ռեսուրսներում առկա բլոգային տիրույթների այցելությունները, նյութերի թարմացման հաճախականությունը, նյութերի թեմատիկ բազմազանությունը, լրատվական բովանդակության համապատասխանությունը և մնացած չափանիշները, որոշվեց հետազոտության շրջանակներում դրանց չանդրադառնալ: Նշենք, որ բլոգների առավելագույն ակտիվության շրջանը Հայաստանում եղել է 2008-2011 թթ.-ին, իսկ դրանից հետո լսարանն աստի-

ճանաբար տեղաշարժվել է դեպի սոցիալական կայքեր, և 2013 թ.-ի տվյալներով համացանցային օգտատերերի միայն 10%-ն է օգտագործում այդ հարթակը:

Կայքերի վերջնական ցանկը բաժանվել է երեք հիմնական խմբի.

1. Տեքստային,
2. Հեռուստատեսային,
3. Ռադիո:

Ընտրանքային համախմբության մեջ վերջնական տեսքով ներառվել է 191 կայք: Ինչպես նշվեց վերևում, սույն հետազոտությունը կատարվել է համատարած ընտրանքի միջոցով, այսինքն գլխավոր համախմբության բոլոր միավորներն ընդգրկվել են ընտրանքային համախմբության մեջ և բոլոր կայքերի համար լրացվել են մեդիաքարտեր: Համատարած ընտրանքը թույլ է տալիս առավել ճշգրիտ տվյալներ ստանալ և խորությամբ ուսումնասիրել յուրաքանչյուր կայքի առանձնահատկությունները: Կայքերի ցանկը ներկայացված է «**Հավելված 1**»-ում:

Մեդիաքարտի (հարցաթերթի) նկարագրությունը

Հետազոտության գիտական արժեքն ապահովելու և արժանահավատ տվյալներ ստանալու կարևորագույն երաշխիքը հուսալի գործիքի կիրառությունն է: Այսպես, ըստ ռուս սոցիոլոգ Վ. Ա. Յադովի, գոյություն ունեն մի քանի գործոններ, որոնք ազդում են չափման ճշգրտության վրա. 1. չափվող օբյեկտի կայունության մակարդակը, 2. չափվող միավորների զգայունությունը, 3. համակարգային սխալների բացակայությունը, 4. չափման կայությունը:² Այս հետազոտության ընթացքում հաշվի են առնվել նշված բոլոր գործոնները: Կայքերում առկա բովանդակային տվյալները, որոնք ենթակա են ամենօրյա փոփոխության, դիտարկվել են 2014 թ. հունիսի 2-12 ժամանակահատվածում: Մեդիաքարտերի լրացման համար հնարավորինս չեզոք շրջան է ընտրվել, այսինքն նշված 10 օրվա ընթացքում չեն եղել խոշոր

² Ядов В., (в сопр. с Семёновой В.В.) Стратегия социологического исследования. Описание, объяснение, понимание социальной реальности, Москва, ИКЦ «Академкнига», «Добросвет», 2003, стр. 151-152.

քաղաքական, տնտեսական կամ սոցիալական իրադարձություններ, արտակարգ իրավիճակներ, տոներ կամ այլ գործոններ, որոնք կարող էին ազդել կայքերում տեղեկատվական նյութերի բովանդակության վրա: Կայքերի թողարկած լրատվական բովանդակության համաժամանակյա դիտարկումը հնարավորություն է տալիս հավասար պայմաններում վերլուծել բոլոր կայքերը՝ պահպանելով օբյեկտիվությունը:

Այս հետազոտությունում չափման միավորն այնպիսին է, որ արձանագրում է որևէ բնութագրիչի առկայությունը կամ բացակայությունը, և դրանով առավելագույնս նվազեցված է սուբյեկտիվ ընկալումների, գնահատականների հնարավորությունները: Համակարգային սխալների բացակայությունն ապահովվում է նախապատրաստական երկարատև աշխատանքների և մանրամասն մշակված ծրագրի շնորհիվ: Չափման կայունությունը, որը ենթադրում է ստացված տվյալների միանշանակություն, ապահովվել է հարցազրուցավարի կողմից լրացված քարտերի 25%-ի կրկնակի լրացման միջոցով, որն իրականացվել է այլ հարցազրուցավարի կողմից, այլ ժամանակահատվածում:

Մեղիաբարտում կիրառվել են հետևյալ սանդղակները.

1. **Նոմինալ**, որոնց միջոցով չափվել են այս կամ այն բնութագրիչի առկայությունը կամ բացակայությունը, նշված լինելու կամ չլինելու հանգամանքը:
2. **Կարգային**, որոնց միջոցով չափվել են կայքերում տեղեկատվական նյութերի թարմացման հաճախականությունը, կայքի վերջին թարմացման ժամանակը և այլն:
3. **Չափողական**, որոնց միջոցով չափվել են ընտրված ժամանակահատվածում լուսարանված նյութերի քանակական բնութագրիչները (օր.՝ քանի արտակարգ իրավիճակ է եղել Հայաստանում և արտասահմանում):

Մեղիաբարտին ներկայացվող հիմնական պահանջներից մեկը չափանիշների, հարցերի հասկանալի և մատչելի ձևակերպումներն են, երկիմաստության բացառումը և հստակությունը: Մեղիաբարտերը հաստատվել են փորձնական լրացումներից հետո, որոնց վերլուծության արդյունքում դուրս են բերվել այն չափանիշները, որոնք

չեն համապատասխանում կայքերի բնութագրիչներին, ճշգրտվել և վերաձևակերպվել են մի շարք հասկացություններ: Փորձնական լրացումները կատարվել են հարցազրուցավարների կողմից, նրանց առաջարկների և դիտողությունների հիման վրա, նախնական լրացված մեղիաբարտերը ստուգելուց հետո դրանք փոփոխության են ենթարկվել:

Մեղիաբարտը բաղկացած է մի քանի բաժիններից: Առաջին բաժնում ընդգրկված են ձևային տվյալներ, որոնք հնարավոր է լրացնել առանց կայքի մանրամասն դիտարկման: Այդպիսի տվյալներից են դոմենային հասցեն, կայքի լոգոտիպի և կարգախոսի առկայությունը կամ բացակայությունը, կայքի հիմնադրի, խմբագրի վերաբերյալ տեղեկատվությունը, կայքի գրանցված լինելու վերաբերյալ փաստաթղթերի առկայությունը կամ բացակայությունը, կայքից օգտվելու վճարման և գրանցման կարգը, հետադարձ կապի վերաբերյալ տեղեկատվությունը, կայքում կիրառվող լեզուն(ները) և այլն:

Երկրորդ բաժնում ներառված են կայքի բովանդակությանը՝ թեմատիկ բաժիններին, ժանրային բազմազանությանը, արտակարգ իրավիճակներին, տեղեկատվության աղբյուրի և նյութերի բազմազանությանը վերաբերող հարցերը:

Երրորդ բաժինը նույնպես ուղղված է կայքերի բովանդակության բացահայտմանը, սակայն առցանց լրատվամիջոցների հիմնական առանձնահատկությունների՝ բազմալրատվության (մուլտիմեդիա), ինտերակտիվության և հիպերտեքստայնության տեսանկյունից: Այս բաժնով հարցազրուցավարները ֆիքսել են կայքերում հղումների առկայությունը կամ բացակայությունը, ինֆորմացիոն տարբեր կրիչների կիրառումը (տեքստ, ֆոտո, վիդեո, ատլիո) և տարբեր ինտերակտիվ ծառայությունների առկայությունը կամ բացակայությունը:

Հետազոտության տվյալների հուսալիության մակարդակի բարձրացման համար մեղիաբարտում կիրառվել են «ծուղակ» հարցեր: Դրանք կառուցված են տրամաբանորեն փոխկապակցված հարցերի ցանցի միջոցով, որոնք թույլ են տալիս վերահսկելու հարցազրուցավարների աշխատանքը և դուրս բերելու հավանական սխալները: Հետազոտության որակի վրա ազդող կարևոր հանգամանքներից մեկը տվյալների վրա սուբյեկտիվ ընկալումների հնարավորին ազ-

դեցության նվազեցումն է: Այդ նպատակով, ըստ Վ. Ա. Յադովի, անհարժեշտ է ավելացնել հարցազրուցավարների թիվը: Նա նշում է, որ նրանց վերապատրաստման և պրոֆեսիոնալիզմի պարագայում տվյալների վրա ներգործությունը կարող է չեղոքանալ: Հարցազրուցավարների վերապատրաստումը և մեղիաքարտերի փորձնական լրացումը նվազեցնում է հարցազրուցավարների սխալվելու հավանականությունը: Հարցաքերթերի փորձնական լրացման գլխավոր գործառույթը հարցազրուցավարների կողմից մեղիաքարտի լիարժեք տիրապետումն է, ինչպես նաև հնարավոր բացթողումների, անհամապատասխանությունների դուրսբերումը, ճշգրտումը և մեղիաքարտերի վերջնականացումը: Մեղիաքարտը ներկայացված է «**Հավելված 2**»-ում:

Առցանց ՁԼՄ-ների չափման ինդիկատորների տիպականացումը

Յուրաքանչյուր հետազոտություն սկսվում է այնպիսի օբյեկտիվ չափանիշների առանձնացումով, որոնց ուսումնասիրության արդյունքում հնարավոր է բնութագրել դիտարկվող օբյեկտը: Այդ բնութագրիչները պետք է չափելի լինեն, հետազոտությամբ ստացված քանակական տվյալների միջոցով հնարավոր լինի բնութագրել օբյեկտի այս կամ այն հատկությունը: Հիմնական դժվարությունն այն է, որ ընտրվեն և դուրս բերվեն օբյեկտի էական բնութագրիչները (չափանիշները):

Հետազոտության հիմքում ընկած է երկու հիմնական դրույթ.

1. Հայկական առցանց ՁԼՄ-ների մի շարք փոխկապակցված բնութագրիչների առկայության բացահայտումը, որոնց ուսումնասիրությունը հնարավոր է դարձնում կազմել առցանց ՁԼՄ-ների մանրամասն նկարագիրը և սահմանել դրանց իրական պատկանելիությունը ՁԼՄ համակարգին:
2. ՁԼՄ-ները պայմանականորեն բաժանվում են երեք հիմնական խմբի. տեքստային առցանց ՁԼՄ, որն իր հիմնական բնութագրիչներով համընկնում է տպագիր մամուլի հետ, առցանց հեռուստատեսություն և առցանց ռադիո:

Առանձնացվել է հիմնական տիպի բնութագրիչների երկու համախմբություն.

1. Բնութագրիչներ, որոնք հատուկ են և՛ առցանց, և՛ արտացանցային զանգվածային լրատվամիջոցներին:
2. Միայն առցանց ՁԼՄ-ներին վերաբերող բնութագրիչներ:

Առցանց լրատվամիջոցների կապն ավանդական ՁԼՄ-ների հետ դրանց կարևոր բնութագրիչներից մեկն է: Հետաքրքրական է դիտարկել նաև ներկայացվող նյութի յուրահատկությունը, որը չափվում է ըստ նյութի տարածման աղբյուրի նշամամբ:

Կարևոր բնութագրիչներից է նաև ֆորմալ չափանիշների առկայությունը, ինչպես օրինակ՝ ՁԼՄ լոգոտիպը, կարգախոսը և այլն: Իհարկե, միայն կարգախոսի կամ լոգոտիպի գոյությամբ չի որոշվում տվյալ կայքի՝ առցանց զանգվածային լրատվամիջոց համարվելը, սակայն վկայում է հեղինակների կողմից կայքը որպես զանգվածային լրատվական միջոց ներկայացնելու մոտեցման մասին: Իրականում տեղեկատվական կայքերում պետք է ներկայացված լինեն կայքի հեղինակները, հիմնադիրները (հիմնադիրը), գլխավոր խմբագիրը, աշխատակիցները, հետադարձ կապի տվյալները և այլ տեղեկություններ:

Առցանց ՁԼՄ-ների հաջորդ կարևոր բնութագրիչը զանգվածային լրատվական միջոց գրանցված լինելն է, ինչը բացահայտելու նպատակով հարցում է ներկայացվել ՀՀ արդարադատության նախարարություն: Միաժամանակ, կայքի դիտարկման արդյունքում հնարավոր է արձանագրել՝ կայքի գրանցված լինելու փաստը հավաստող փաստաթղթերի առկայությունը:

Անհրաժեշտ է անդրադառնալ նաև այնպիսի բնութագրիչների, ինչպես կայքերից օգտվելու վճարման կարգը: Տեղեկատվությունը համացանցային ՁԼՄ-ներից ստացող մարդիկ դրա համար վճարման համակարգի վերաբերյալ միանգամայն տարբեր պատկերացում ունեն՝ համեմատած ավանդական զանգվածային լրատվամիջոցների: Համացանցից օգտվողների մեծամասնության պատկերացմամբ տեղեկատվությունը պետք է անվճար և հեշտ հասանելի լինի՝ առանց որևէ սահմանափակման: Եվ հենց այս գաղափարի շուրջ էլ ձևավորվել է առցանց տեղեկատվության տարածման համակարգը:^{3,4}

³ Shapiro A.L., Street Corners in Cyberspace. The Nation, July 3, 1995, pp. 10-14

⁴ Harasim Linda M., Networkds: Networks as Social Space // Global Networks:

Կայքի լեզուները և աշխարհագրական տարածվածությունը նույնպես առցանց լրատվամիջոցի բնութագրման կարևորագույն չափանիշներ են: Ակնհայտ է, որ հայկական լրատվական կայքերում առավելապես պետք է կիրառվի հայերենը, իսկ այլ լեզուների առկայությունը մատնանշում է կայքի՝ առավել մեծ լսարան գրավելու միտումը: Աշխարհագրական տարածվածության տեսանկյունից նույնպես ենթադրվում է, որ առավել շատ կներկայացվեն Հայաստանին վերաբերող նյութեր:

Առցանց լրատվամիջոցների առանձնահատուկ բնութագրիչները՝ բազմալրատվությունը, ինտերակտիվությունը, հիպերտեքստային բնույթի են, առկա են նաև որոշ այլ ֆունկցիաների, ծառայությունների: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև որոշակի կոնկրետ ժամանակահատվածում նյութերի քարմացման հաճախականությանը:

Առցանց լրատվամիջոցների բնութագրման համար դիտարկվել են տեղեկատվական նյութերի ժանրային և տիպային բազմազանությունը, թեմատիկ բաժինների միջոցով խմբագրվողները կարող են նյութը դասակարգել ըստ բաժինների՝ դյուրացնելով կայքից օգտվելու կարգը: Թեմատիկ բաժիններից բացի անհրաժեշտ է դիտարկել նաև լրատվական նյութերի բովանդակությունը, որը թույլ է տալիս առավել հստակորեն պատկերացնել կայքերի նյութերի բազմազանությունը:

Կայքերի մախնական դիտարկումից հետո առանձնացվել է արտակարգ իրավիճակների, պատահարների աշխարհագրական տարածվածությունը և ըստ այդմ դիտարկվել է այն փաստը, թե որտեղ են տեղի ունեցել հաղորդվող արտակարգ իրավիճակները:

Ուշադրություն է դարձվել նաև կայքում գովազդի առկայությանը, որը ենթադրում է, որ հիմնադիրները կայքի գործունեությունը դիտարկում են որպես եկամտի ստացման աղբյուր:

Առցանց լրատվամիջոցների առանձնահատկություններից են նաև լրատվական նյութերի ներկայացման հիմնական կառուցվածքային միավորները, որոնց օգնությամբ օգտատերերի համար առավել հեշտ և գրավիչ է դառնում կայքից օգտվելը:

Տվյալների ստացման մեթոդները

Սույն հետազոտության մեջ տվյալների ստացման բազմաթիվ մեթոդներից նպատակահարմար է եղել կիրառել փաստաթղթերի բովանդակային վերլուծության մեթոդը: Փաստաթուղթն այս դեպքում սահմանվում է որպես ցանկացած տեղեկատվություն, որն ամրագրված է տպագիր կամ ձեռագիր, ֆոտո կամ վիդեո ժապավենին:⁵ Այսինքն, սույն հետազոտության շրջանակում կայքերը դիտարկվել են որպես փաստաթուղթ: Մշակված մեղիաքարտը թույլ է տալիս որակական տվյալները վերածել քանակական տվյալների, համակարգել ըստ համապատասխան բաժինների և մուտքագրել համակարգիչ: Մեղիաքարտում առկա չափանիշներից բացի հարցազրուցավարները կատարել են նշումներ նաև այլ բնութագրիչների վերաբերյալ: Նշված տվյալները մույնպես կիրառել են հետազոտության արդյունքների վերլուծության ժամանակ:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը

Հայաստանի առցանց ՁԼՄ-ների բնութագրիչների նկարագրությանն ուղղված հետազոտությունում դիտարկվել է 191 կայք: Նախապատրաստական փուլում կայքերը բաժանվել են 3 պայմանական խմբի.

1. Առցանց տեքստային,
2. Առցանց հեռուստատեսություն,
3. Առցանց ռադիո:

Մեթոդաբանական բաժնում առաջադրված վարկածներից մեկը վերաբերում էր առցանց ՁԼՄ-ները նշված երեք հիմնական խմբերին բաժանելու դրույթին: Սակայն հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ առցանց ՁԼՄ-ների համակարգը կայքերի հիմնադիրներին, խմբագիրներին տեղեկատվության տարածման միանգամայն նոր ձևի սահմանման հնարավորություն են տալիս, ինչն անհնարին է դարձնում նշված դասակարգումը: Դիտարկված կայքերում ընդգրծվում է մեկ կայքի մեջ լրատվության մատուցման տարբեր եղանակներ

⁵ Ядов В., 2010-2011:


ըը միավորելու միտումը, որն իր հերթին առցանց լրատվական համակարգերի նոր օղակ է ձևավորում:

Այսպես, դիտարկված կայքերի 3.7%-ում միաժամանակ առկա են և՛ առցանց տեքստային, և՛ առցանց հեռուստատեսային, և՛ առցանց ռադիո բովանդակություն, որոնք միասին ձևավորում են համակցված կայքի տարբերակը, որում տեղեկատվության ներկայացման բոլոր եղանակները հավասարաչափ են օգտագործված: Թեև կայքերի ընդհանուր թվի համեմատ համակցված կայքերի կշիռն այնքան էլ մեծ չէ, սակայն սա տեղեկատվության հրապարակման միանգամայն այլ մոտեցում է, որը հնարավոր է դառնում միայն առցանց համակարգի առկայության պայմաններում:

Գծապատկեր 1-ում պատկերված է գլխավոր համախմբությունում (սույն հետազոտության շրջանակներում այն համապատասխանում է ընտրամբային համախմբությանը) առցանց ՁԼՄ-ների տոկոսային բաշխումը:

Գծապատկեր 1.

Առցանց ՁԼՄ-ների բաշխումն ըստ ներկայացվող բովանդակության տեսակի




Տեքստային առցանց լրատվամիջոցները կազմել են ընտրամբի 68.6%-ը (131 կայք), հեռուստատեսայինները՝ 20.9%-ը (40 կայք), ռադիոն՝ 6.8%-ը (13 կայք): Համակցված կայքերը 7-ն են (3,7%):

Հետազոտության նախապատրաստական փուլում նախատեսվում էր դիտարկել միայն դոմենային «.am» տիրույթի կայքերը, սակայն գլխավոր համախմբությունը կազմելիս բացահայտվեց, որ այս սկզբունքի կիրառության դեպքում զգալի տեղեկատվության կորուստ կլինի, ուստի ներառվեցին այլ տիրույթներում գործող կայքեր ևս:

Գծապատկեր 2-ում կայքերի բաշխումն է ըստ դրանց գործառնման տիրույթների:


Գծապատկեր 2.
Առցանց ՁԼՄ-ների կայքերի բաշխումն ըստ գործառնման տիրույթի



«.am» տիրույթում գործող կայքերի թիվը 115-ն է, «.com» տիրույթում գործում է 45, «.ru» տիրույթում՝ 9, իսկ «.tv» տիրույթում՝ 7 կայք:

Տեքստային կայքերն ըստ գործունեության տիրույթի բաշխվել են հետևյալ կերպ.

Գծապատկեր 3.
Տեքստային բովանդակությամբ կայքերի բաշխումն ըստ գործառնման տիրույթի




Տեքստային կայքերի ընդհանուր քիվը 131 է կամ 68.6%, որից 79-ը (60.3%) գործում են «.am», 32-ը (24.4%)՝ «.com» և 7-ը (5.3%)՝ «.ru» տիրույթներում:

Հաջորդ գծապատկերում ներկայացված է առցանց հեռուստատեսությունների տիրույթային բաշխվածությունը:

Գծապատկեր 4.


Առցանց հեռուստատեսային կայքերի բաշխվածությունը ըստ գործարկման տիրույթների



Դիտարկված առցանց հեռուստատեսային կայքերի ընդհանուր քիվը 40 է կամ 20.9%, որից 21-ը (53%-ը) գործում է «.am» տիրույթում, 9-ը (23%-ը)՝ «.com» տիրույթում, 7-ը (18%-ը)՝ «.tv» տիրույթում, 2-ը (5%-ը)՝ «.ru» տիրույթում, 1 (3%)՝ «.tk» տիրույթում:

Գծապատկեր 5.

Առցանց ռադիոյի և համակցված կայքերի բաշխվածությունը ըստ գործարկման տիրույթների




Դիտարկված կայքերի ցանկում առցանց ռադիոյի տոկոսային չափաբաժինը 6.8% է կամ 13 կայք, համակցված տարբերակների՝ 3.7% կամ 7 կայք: Դրանցից «.am» տիրույթում գործում է կայքերի 77%-ը (10 կայք), «.com»-ում՝ 15% (2 կայք), «.fm»-ում՝ 8% (1 կայք):

Դիտարկված 7 համակցված կայքերից 5-ը գործում են «.am», իսկ 2-ը՝ «.com» տիրույթներում:


Դոմենային առանձնահատկությունները դիտարկելուց հետո ուսումնասիրվել է կայքերում լոգոտիպերի և կարգախոսների առկայության/բացակայության ցուցանիշը, որի արդյունքները ներկայացված են գծապատկերներում:

Գծապատկեր 6.

Լոգոտիպերի և կարգախոսների առկայությունը դիտարկված կայքերում



6.1 Լոգոտիպերի առկայությունը




6.2 Կարգախոսների առկայությունը

Այսպես, լոգոտիպն առկա է 96,9% կայքերում, իսկ կարգախոս 19,4%-ում: Ընտրանքի միայն 19.45%-ը (37 կայք) և՛ կարգախոս, և՛ լոգոտիպ ունեն:


Կարգախոսի առկայությունը վկայում է այն մասին, որ կայքի հիմնադիրներն ուշադրություն են դարձրել կայքի հետագա զարգացմանը: Այդ մոտեցումն առավել բնորոշ են այն կայքերին, որոնք ակտիվ և նշանակալի են մեդիա ասպարեզում:

Կայքերի լոգոտիպերի և կարգախոսների առկայությունն ըստ կատարված դասակարգման ներկայացված է գծապատկերներ 7.1-ում և 7.2-ում:

Գծապատկեր 7.1.
Լոգոտիպերի առկայությունը առցանց ՁԼՄ տարբեր տեսակների կայքերում



Գծապատկեր 7.2.
Կարգախոսների առկայությունը առցանց ՁԼՄ տարբեր տեսակների կայքերում



Ստորև ներկայացված են կայքերում հանդիպող կարգախոսների որոշ օրինակներ.

- «Արդարությունն առանց ուժի անօգնական է, Ուժն առանց արդարության՝ բռնակալ...», www.avangard.am,
- «...ճշմարտությունն ավելի թանկ է», www.asparez.am,
- «Ճշմարտութիւնն ազատեսցն գճեզ», www.armtown.com,
- «Իմացի՛ր դեպքի վայրից», www.shamshyan.com,
- «Խավարն անվերջ անիծելու փոխարեն մեկ մոմ վառիր՝ շուրջդ լուսավորելու համար...», www.migtvr.com և այլն:


Հետաքրքրական է, որ կարգախոս ունեցող կայքերը հիմնականում անկախ լրատվական են: Այսինքն դրանց 51.4%-ն արտացան-

ցային տարբերակ չունեցող, ինքնուրույն լրատվական կառույցներ են, 16.2-ական տոկոսը՝ ավանդական զանգվածային լրատվամիջոցի առցանց տարբերակներ և համակցված կայքեր:


Հետազոտվող հաջորդ կետը կայքերի «Մեր մասին» բաժնում լրատվականի խմբագրի կամ հիմնադրի կողմից թողարկված տեղեկատվությունն է կայքի հիմնադրի մասին: Արդյունքները ներկայացված են Գծապատկեր 8-ում:

Գծապատկեր 8.

Լրատվական կայքերում հիմնադրի վերաբերյալ տեղեկատվության առկայությունը



Այս առումով հատկանշական է, որ կայքերի կեսից ավելիի՝ 50.3%-ի դեպքում (98 կայք) հիմնադրի վերաբերյալ տեղեկատվությունն իսպառ բացակայում էր: Հաջորդ բարձր ցուցանիշը՝ 32,5%, գրանցվել է ՁԼՄ-ի կողմից հիմնադրված կայքերում: 2 կայքում, որը կազմում է ընտրանքային համախմբության 1%-ը, որպես կայքի հիմնադիր նշված են քաղաքական կուսակցություններ, համապատասխանաբար «Սահմանադրական իրավունք միություն» կուսակցության www.iravunk.com կայքը և «Հայ Յեղավոյիսական Դաշնակցություն» կուսակցության www.horizonweekly.ca-ն: 4.2% կայքերի հիմնադիրներ նշված են հասարակական կազմակերպությունները:




Համակցված կայքերից միայն <http://www.migtvr.com>-ում է նշված գլխավոր խմբագրի անունը, առցանց ռադիոյի 4 կայքերում, հեռուստատեսության 9, տեքստային կայքերը գերազանցում են մյուսներին՝ 21 կայք կամ 57,1% ցուցանիշով:

Դիտարկված առցանց լրատվամիջոցների 49,2%-ը կապված է ավանդական (offline) ՁԼՄ-ի հետ, իսկ մնացած 50,8%-ը հանդես է գալիս որպես անկախ լրատվական կայք:⁶ Կայքերի 30,7%-ը (58 կայք), հանդես են գալիս մաս որպես ավանդական զանգվածային լրատվամիջոց:

Արդյունքները ներկայացված են 10.1, 10.2 և 10.3 Գծապատկերներում:


⁶ Երկու կայք լիովին օտարալեզու են և վերլուծության հետագա փուլերում դրանց համար մեղիաբարտեր չեն լրացվել: www.agos.com կայքը թուրքերեն է, որի հայերեն բաժինը չի գործում, իսկ www.soyarmenio.com կայքը ֆրանսերեն է:

Գծապատկեր 10.1.
Լրատվական կայքերը ըստ ավանդական ՁԼՄ-ի հետ կապի
առկայության կամ բացակայության



Գծապատկեր 10.2-ում պատկերված է առցանց լրատվական կայքերի կապն ավանդական լրատվամիջոցների հետ ըստ պայմանականորեն առանձնացված տիպերի:

Գծապատկեր 10.2.
Լրատվական կայքերի առանձնացված տեսակների ցուցանիշները ըստ ավանդական ՁԼՄ-ի հետ կապի առկայության կամ բացակայության




Ակնհայտ է, որ անկախ լրատվամիջոցները շատ են տեքստային բնույթի կայքերում՝ 61%, հեռուստատեսային կայքերում՝ 33%, հա-

մակցված տեսակի՝ 29% և ռադիոյի՝ 15%: Իսկ միաժամանակ առցանց և ցանցից դուրս ներկայացված կայքերի թվում ամենաբարձր տվյալները գրանցել է ռադիոն՝ 77%, հեռուստատեսությունը 40% և համակցված տարբերակը՝ 29% (պետք է արձանագրել, որ բացարձակ արժեքները միանգամայն տարբերվում են տոկոսային տվյալներից, այսպես, նշված 29%-ը համապատասխանում է 2 կայքի), տեսքտային բնույթի կայքերը՝ 23% կամ 30 կայք:

Փժապատկեր 10.3.

Լրատվական կայքերի առանձնացված տեսակների ցուցանիշները ըստ ավանդական ՁԼՄ-ի հետ կապի առկայության կամ բացակայության



Առցանց հեռուստատեսային կայքերի 28%-ը հանդես է գալիս որպես այլ հեռուստաընկերությունների համակցված ներկայացման միջոց, դրանք չունեն սեփական հեռուստաձևեր և տեղեկատվու-


թյուն են վերցնում առցանց կամ offline այլ հեռուստաընկերություններից: Օրինակ՝ www.yere1.ru, www.xmail.am, www.tv-week.am, www.hayastantv.com և այլն:

Վերլուծության հաջորդ կետում դիտարկվել են կայքերում հետադարձ կապի տվյալների առկայությունը և ձևերը:

Այսպես, կայքերի 37% դեպքում նշված է գրասենյակի հասցեն, 48% դեպքում՝ հեռախոսը և 78% կայքերում առկա է խմբագրին նամակ գրելու հնարավորության գործիքը: Ընդ որում, կայքերի միայն 12%-ում է և՛ էլեկտրոնային փոստի հասցե նշված, և՛ համապատասխան հատված առանձնացված խմբագրին նամակ ուղարկելու համար:

Գծապատկեր 11.

Լրատվական կայքերում հետադարձ կապի տվյալների ներկայացվածությունը




19.6% կայքերում հետադարձ կապի որևէ տվյալ չկա: Կայքերի 63%-ում չեն նշում գրասենյակի հասցեն, 52%-ում՝ հեռախոսահամարը: Ի տարբերություն էլեկտրոնային նամակ գրելու հնարավորության (22%), նախորդ երկուսը բավականին բարձր տվյալներ են գրանցել, ինչը հավաստում է, որ կայքերի հեղինակները փորձում են պահպանել անանունությունը. հասցեի և հեռախոսահամարի առկայության դեպքում ավելի մեծ է անմիջական շփման հնարավորությունը, մինչդեռ էլեկտրոնային փոստի միջոցով հաղորդակցությունն առավել անանուն է: Հենց վերջինն է համացանցի գրավչության հիմնական գործոններից մեկը, որը հավասարապես ներգործում է ինչպես օգտատերերի, այնպես էլ կայքերի հիմնադիրների վրա:

Հետաքրքրական են կայքերի գրասենյակների աշխարհագրական բաշխվածության տվյալները: Ինչպես և ակնկալվում էր, այս դեպքում գերակշռում են մայրաքաղաքում տեղակայված գրասենյակները՝ 76%, հանրապետության տարբեր մարզերում գործում է 14% կայք, Լեռնային Ղարաբաղում՝ 3%, իսկ արտասահմանում՝ 7%:⁷

Համացանցի ձևավորումն ի սկզբանե հիմնված է եղել տեղեկատվության ազատ տարածման սկզբունքի վրա: Հենց այս հանգամանքն է, որ հիմք է ծառայել առցանց ՉԼՄ-ների այսքան լայն տարածմանը: Սակայն այժմ այն բիզնես աշխարհի մի մասն է և բազմաթիվ մարդկանց ու կազմակերպությունների համար որպես եկամտի աղբյուր է հանդես գալիս, չնայած կայքերի ստեղծման և գործունեության համար յուրաքանչյուր հիմնադիր կարող է ունենալ իր սուբյեկտիվ պատճառները: Եկամուտը կարող է կապված լինել օգտատերերի կողմից կայք մուտք գործելու համար վճարման հետ, սակայն մեր դիտարկած առցանց լրատվական կայքերից ոչ մեկում մուտքի վճարման կարգ չի սահմանվում: Կան կայքեր, որոնք գրանցման կարգ ունեն՝ մեկնաբանություններ և քննարկումներ անելու հնարավորության ընձեռնման համար, սակայն տրամադրվող տեղեկատվությունը անվճար է, անանուն և հասանելի: Այդ կայքերի տոկոսային կշիռը 3.7 %:⁸ Եկամտի հիմնական աղբյուրներից են կայքում տեղադրվող գովազդները:

Գծապատկեր 12.

Գովազդների առկայությունը հայկական լրատվական կայքերում



⁷ Տվյալները վերաբերում են միայն գրասենյակի հասցեն նշած կայքերին:


⁸ Facebook սոցիալական կայքի մեկնաբանությունների հնարավորությունը հաշվառված չէ:

Այսպես, կայքերի 68.3%-ում գովազդներ առկա են, ինչը թույլ է տալիս արձանագրել կայքի հիմնադիրների կողմից այն որպես եկամտի աղբյուր դիտարկելու հանգամանքը: Միայն 31.7% կայքերում է, ուր գովազդներ չկան:

Ըստ դոմենային տիրույթի գովազդների առկայության վերլուծությունն ունի հետևյալ տեսքը (տե՛ս Գծապատկեր 13.1 և 13.2):

Գծապատկեր 13.1

Գովազդների առկայությունը ըստ կայքերի գործունեության տիրույթի




«.am» տիրույթում գործող 115 կայքերից 71.3%-ում գովազդ առկա է, 28.7%-ում՝ բացակայում է, «.ru» տիրույթում գովազդ առկա է 9 կայքից 6-ում, «.com» տիրույթի լրատվական կայքերում գովազդների տոկոսային արժեքը 62.8% է:

Գծապատկեր 13.2-ում տոկոսային բաշխվածությունը տրված է ըստ ընդհանուր կայքերի թվի: Գովազդների 43.4%-ը «.am», 3.2%-ը՝ «.ru» և 14.3%-ը՝ «.com» տիրույթում գործող կայքերում է:

Գծապատկեր 13.2.

Գովազդների առկայությունը ըստ կայքերի գործունեության տիրույթի



Քանի որ «.info», «.net», «.org», «.tk», «.tv», «.ca» տիրույթներում գովազդների տեսակարար կշիռը շատ փոքր է, դրանք ներկայացված են «այլ» խմբով:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ կայքերի 38.7%-ը բացառապես հայալեզու է, որից 1.4% (բացարձակ արժեքը՝ 1 կայք <http://lradou.com/>) գործածում է միայն դասական հայերենը: Ընդհանուր առմամբ դասական հայերեն կիրառվում է 5 կայքում (կայքերի 2.6%-ը): Նույնքան կայքերում (2,6% կամ 5 կայք) գործածվում է 4-6 լեզու:


1. <http://azg.am>՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, պարսկերեն, վրացերեն, թուրքերեն,
2. <http://oratert.com>՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, արաբերեն, պարսկերեն,
3. <http://armrss.com>՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն,
4. <http://nt.am>՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, դասական հայերեն,
5. <http://news.am>՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, թուրքերեն:

Կայքերի 25.7% կիրառում է 3 լեզու՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, այսինքն փորձ է արվում ընդլայնել թիրախային լսարանը: Միաժամանակ 15,2% կայքերում բացառապես չի օգտագործվում հայերենը,

որից 10.5%-ում նյութերը ներկայացված են միայն ռուսերեն, 3,7%-ը՝ անգլերեն⁹ 0,5%-ը՝ թուրքերեն, 0,5%-ը՝ ֆրանսերեն, 0,5%-ը՝ ռուսերեն և անգլերեն: Ուշագրավ է, որ նշված կայքերի թվում կան «.am» տիրույթում գործարկվողներ՝ defacto.am, tv-week.am, radioaurora.am, nv.am և այլն: Դրանց ընդհանուր թիվը կազմում է 4.7%՝ բացառությամբ «.am» տիրույթի, մյուս տիրույթներում միայն օտարալեզու կայքերը 10.5% են, միայն հայերեն և ռուսերեն բաժիններ ունեն կայքերի 11.5%-ը, իսկ միայն անգլերեն և հայերեն՝ 5.2%-ը:

Գծապատկեր 14.

Լրատվական կայքերում նյութերի թարմացման հաճախականությունը



Հետազոտության տվյալների համաձայն կայքերը բավականին ակտիվ են, 86.8% կայքերը թարմացվում են օրը մի քանի անգամ, 4.7%՝ օրը մեկ անգամ, 4.2%՝ շաբաթական մեկ անգամ և միայն 4.2% է, որ շաբաթական մեկ անգամից հազվադեպ են թարմացվում:


Սակայն պետք է նշել, որ կայքերի 15.2% վերջին անգամ թարմացվել է 1 ամսից ավելի վաղ, 28 կայք կամ 14.7% 3 ամսից ավելի վաղ: Հաշվի առնելով, որ դրանց 75,9%-ն իրենց ակտիվ գործարկման ընթացքում օրական մի քանի անգամ են թարմացվել, հավանական է, որ պարզապես դադարել են գործել:

⁹ Հեռուստատեսությունների և ռադիոյի դեպքում միայն անգլերեն լեզվի դիտարկումը կապված է ոչ թե բովանդակության, այլ կայքի բաժինների անգլերեն լինելու փաստի հետ:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ կայքերը հիմնականում ունիվերսալ են մատուցվող նյութերի բազմազանության տեսանկյունից, անդրադառնում են և՛ Հայաստանում, և՛ ամբողջ աշխարհում տեղի ունեցող տարբեր իրադարձությունների: Սակայն կան մաս կայքեր, որոնք առավել խորը և մանրամասն են լուսաբանում այս կամ այն ոլորտի նորությունները: Գծապատկեր 15.1-ում կայքերի բաշխվածությունն է ըստ նյութերի բազմազանության ցուցանիշի:

Գծապատկեր 15.1.

Լրատվական կայքերի նյութերի բազմազանությունը




Հայաստանի լրատվական կայքերի 83%-ը նորություններում անդրադառնում է 3 և ավելի ոլորտի, իսկ մեկ և երկու ոլորտ լուսաբանող կայքերը 8.5-ական տոկոս են կազմում:

Դրանցից arminter.am կայքը տեղեկատվություն է տրամադրում միջազգային հարաբերությունների վերաբերյալ, babytv.am-ը նշվում է որպես առաջին և միակ մանկական հեռուստաընկերություն, econews.am-ն անդրադառնում է բնությանը և էկոլոգիային առնչվող նորություններին ինչպես Հայաստանում, այնպես էլ ամբողջ աշխարհում, «Հանրագիտարան» բաժնում ներկայացնում է Հայաստանի «Կարմիր գիրք» ենթաբաժինը: Բնության և էկոլոգիայի հարցերը լուսաբանող ևս մեկ կայք՝ ecolur.org-ը, առանձնացնում է 1 տասնյակից ավելի բաժիններ, ինչպես մաս առանձին ներկայացնում է մարզային նորու-

թյունները: Նշված երկու կայքն էլ ակտիվորեն գործում են: itarmenia.net կայքն անդրադառնում էր տեղեկատվական տեխնոլոգիաների նորություններին, սակայն վերջին թարմացումն իրականացրել է 2012 թ.-ին և դրա հետագա ակտիվ գործարկումն իրատեսական չի թվում: razm.info-ի թիրախը ռազմական իրադարձություններն ու նորություններն են: www.crossnews.am կայքն առավելապես լուսաբանում է կրոնական, հոգևորական իրադարձությունները: Մարզական նորություններին անդրադարձող կայքերի թիվն անհամեմատ ավելի շատ են (sportarmenia.com, newslines.am, armsport.am և այլն): Ընդհանուր վերցրած՝ կայքերի 58,5%-ը մարզական իրադարձությունները լուսաբանող բաժին ունի, իսկ 72,3%-ը հունիսի 2-12-ի ընթացքում սպորտային նորություններ և հոդվածներ են հրապարակել: 15.2 գծապատկերում ներկայացված է կայքերի ոլորտային բազմազանությունը՝ ըստ պայմանականորեն առանձնացված առցանց ՉԼՄ-ների տեսակների:

Գծապատկեր 15.2.

Առցանց ՉԼՄ-ների առանձին տեսակների բաշխվածությունն ըստ ներկայացվող ոլորտների բազմազանության




Առցանց ՉԼՄ-ների տեքստային տարբերակների 83.7%-ը նյութերի բազմազանության տեսանկյունից ունիվերսալ է և տարբեր ոլորտների լուսաբանում է իրականացնում (բացարձակ արժեքը 108 կայք է): Առցանց հեռուստատեսության 90%-ն է ունիվերսալ (36 կայք), ռա-

դիոյի դեպքում նույնպէս բարձր է ունիվերսալ կայքերի տեսակարար կշիռը, սակայն այս դեպքում մեկ-երկու ոլորտ լուսաբանող կայքերը ևս զգալի թիվ են կազմում՝ 38,5%:


Օգտատիրոջ համար կայքի հարմարավետ կիրառումը մեծապէս կախված է կայքի ձևավորումից, լրատվական բաժինների առկայությունից, որոնց միջոցով վերջինս հեշտությամբ որոնում է իրեն առավել հետաքրքրող տեղեկատվությունը: 16.1, 16.2(ա), 16.2(բ), 16.3 և 16.4 գծապատկերներում ներկայացված են բաժինների առկայության ցուցանիշով կայքերի ուսումնասիրության տվյալները:

Գծապատկեր 16.1.
Կայքերի բաշխվածությունն ըստ բաժինների առկայության




Կայքերի 84.1%-ի դեպքում բաժիններ առանձնացված են, 15.9%-ում՝ ոչ: Ընդ որում, դրանցից 5.9%-ը մամուլի տեսություն իրականացնող կայքեր են և բաժինների փոխարեն առանձնացնում են այն լրատվամիջոցների անվանումները, որոնց հրապարակումներին անդրադարձ է կատարվում, իսկ 7.4%-ում, որոնք առցանց ռադիո և հեռուստատեսություն են, նշվում են հաղորդաշարերը:

Գծապատկեր 16.2(ա).
Կայքերում առավել հաճախ հանդիպող բաժինների բաշխումը



Կայքերում ամենատարածված բաժիններն են «Տնտեսություն» (64.2%), «Մշակույթ» (58.5%), «Սպորտ» (58.5%), «Հասարակություն» (57.9%) և «Քաղաքականություն» (54.1%): Արտակարգ իրավիճակները որպես առանձին բաժին նշված են 20.8% կայքերում, իսկ «Պաշտոնական» բաժինը՝ 11.9%-ում:


Գծապատկեր 16.2(բ).
Կայքերում առավել հաճախ հանդիպող բաժինների բաշխումը



16.2(բ) գծապատկերում ներկայացված է հայկական լրատվական կայքերում առավել հաճախ հանդիպող բաժինների համախումբը: Դրանց թվում բարձր է «Ժամանց» և «Շոու բիզնես»՝ 34%, «Միջազգային հարաբերություններ»՝ 27.7%, «Մարդիկ» և «Անհատներ»՝ 25.2%, «Գիտություն» և «Կրթություն»՝ 20.8% բաժինների առկայությունը: Իսկ «Հոգևոր կյանք», «Հրաշքներ», «Առեղծվածներ», «Ապրելակերպ», «Ընտանիք», «Տուն», «Կենդանական և բուսական աշխարհ» բաժիններն ամենահազվադեպն են հանդիպում:

Հետազոտության ընթացքում ուշադրություն է դարձվել լրատվական կայքերի կողմից Հայաստանի Հանրապետության համար այնպիսի առանցքային հարցերի առանձնացմանը, ինչպես Լեռնային Ղարաբաղին առնչվող հարցերն են և Հայոց ցեղասպանությանը վերաբերող նյութերը:


Գծապատկեր 16.3.
Կայքերում Արցախի և Հայոց ցեղասպանության հարցերի լուսաբանմանը առանձին բաժինների հատկացումը



Կայքերի 19.5%-ում Արցախն առանձնացված է որպես բաժին, իսկ Ցեղասպանության վերաբերյալ նյութերը մեկ բաժնում համակըցված ներկայացված են միայն 2.5% կայքերում:

Ըստ աշխարհագրական տեղակայության կայքերում առանձնացված են «Տարածաշրջան» և «Աշխարհ» բաժինները՝ համապատասխանաբար 21.9% և 27.8% ցուցանիշներով (տե՛ս՝ Գծապատկեր 16.4.):

Գծապատկեր 16.4.
Նորությունների աշխարհագրական տեղակայման վրա հիմնված
բաժինների առանձնացումը




Առցանց ՁԼՄ-ների հաղորդած նյութերի բովանդակության վերաբերյալ տվյալները հաշվարկվել են միայն այն կայքերի համար, որոնք քարմացվել են 2014 թ. հունիսի 2-12-ը ժամանակահատվածում: Կայքերի նյութերի բովանդակության կողավորումը կատարվել է նախապես դուրս բերված 18 կատեգորիաների հիման վրա, որոնք համապատասխանում են կայքերից նախապես դուրս բերված բաժինների անվանումներին:

Դաշտային աշխատանքները կատարվել են հունիսի 12-ից հունիսի 8-ն ընկած ժամանակահատվածում և հրապարակված նյութերի բովանդակային բաղադրիչն ուսումնասիրվել է արխիվների դիտարկման միջոցով: Ընդ որում, արխիվ ունի կայքերի 94.7%:


Թեմատիկ բովանդակությունը դիտարկվել է կայքերի 73.8%-ում, 20.4%-ը դիտարկվող ժամանակահատվածում չի քարմացվել, իսկ 5.8%-ն այն կայքերն են, որոնք արխիվ չունեն և ուղիղ եթերով հաղորդաշարեր և ռադիո ծրագրեր են հեռարձակում: Քանի որ բոլոր ծրագրերը դիտարկելն իրատեսական չէր, հատկապես որ դրանք մեծամասամբ չունեին հստակ սահմանված թեմատիկ բովանդակություն, ինչպես նաև ընտրանքային համախմբության մեջ բավական փոքր ծավալ էին կազմում, մշված համախումբը դուրս է մնացել հետազոտությունից:

Գծապատկեր 17.
Դաշտային աշխատանքի ընթացքում թեմատիկ բովանդակության
դիտարկման ենթարկված կայքերը




Կայքերի թեմատիկ բովանդակության դիտարկման տվյալները ներկայացված են 18.1(ա), 18.1(բ) և 18.1(գ) գծապատկերներում: 18.1(ա)-ում լրատվական կայքերում առավել հաճախ հանդիպող 5 բաժնին համապատասխանող թեմատիկ նյութերի հրապարակման ցուցանիշներն են:

Գծապատկեր 18.1(ա).
Կայքերի նյութերի թեմատիկ բովանդակությունը




Դիտարկված կայքերում (բացարձակ արժեքը 141 կայք) զգալի թիվ են կազմում տնտեսության (82.3%), քաղաքականության (80.1%), հասարակության (80.1%), մշակույթի (72.3%) և սպորտի (72.3%) թեմաներով հրապարակումները (հոդվածներ, տեսագրություններ, ձայնագրություններ):

**Փծապատկեր 18.1(բ).
Կայքերի նյութերի թեմատիկ բովանդակությունը**



Այս համախմբության մեջ զգալի թիվ է կազմում նաև միջազգային հարաբերությունների (73%), ուժային կառույցների, (բանակ, ոստիկանություն) (68.8%), ժամանցի և շոու բիզնսի (68.1%) հետ կապված իրադարձությունների լուսաբանումը:

Գծապատկեր 18.1 (գ).
Կայքերի նյութերի քեմատիկ բովանդակությունը




Կայքերի 59.6%-ում առկա են հրապարակումներ (նորություններ, վերլուծություններ, տեսագրություններ, ձայնագրություններ) արտակարգ իրավիճակների, սպանությունների, դժբախտ պատահարների վերաբերյալ: Ընդ որում, արտակարգ իրավիճակների 68.9%-ն անդրադառնում է Հայաստանում, իսկ 31.1%-ը՝ արտասահմանում տեղի ունեցող իրադարձություններին:¹⁰ Հարցազրուցավարները նշում են, որ եթե հոդվածի վերնագրից պարզ չի դառնում արտակարգ իրավիճակի աշխարհագրական տեղակայումը, իսկ հոդվածի բովանդակությունը տեղեկատվություն է պարունակում մեծ թվով գոհերի, հազվադեպ պատահող իրավիճակների և այլնի մասին, ապա մեծ հավանականությամբ այն վերաբերում է արտասահմանին: Հոդվածի ազդեցիկությունը բարձրացնելու համար հեղինակները վերնագրում չեն նշում դեպքի վայրը. օրինակ՝ «Մայրը սպանել է երեխաներին», «Անտարբեր ծնողները նորածնին թողել են մեքենայի մեջ, երեխան մահացել է» և այլն:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ նույնիսկ այն դեպքում, երբ կայքերում առանձնացված չեն լինում բաղադրա-

¹⁰ Արդյունքները ստացվել են յուրաքանչյուր կայքում հունիսի 2-12 ժամանակահատվածում կայքերի բոլոր հոդվածների վերնագրերի անվանումների հաշվարկմամբ: Եթե հոդվածի վերնագրից պարզ չի եղել, թե որտեղ է տեղի ունեցել արտակարգ իրավիճակը, ապա հարցազրուցավարը կարդացել է ամբողջ հոդվածը և կոդավորել ըստ հոդվածի բովանդակության:


կանություն, տնտեսություն, հասարակություն, շոու բիզնես բաժինները, դրանց վերաբերյալ հրապարակումներ առկա են կայքերի կեսից ավելիում: Բաժինների և կայքերի միջև համեմատությունը առավել հստակ ցույց տալու համար տվյալները հաշվարկվել են գլխավոր համախմբության բոլոր կայքերի համար:

Գծապատկեր 19.1(ա).
Կայքերում թեմատիկ բաժինների և թեմատիկ բովանդակության համեմատական տվյալները




Գլխավոր համախմբության 191 կայքում «Տնտեսություն» բաժին առկա է 53.4%-ում, իսկ տնտեսության թեմայով հրապարակումները 60.7% են կազմում, մյուս կերպ «Հասարակություն» բաժին առկա է 48.2%-ում, իսկ առնչվող հրապարակումներ՝ 59.2%-ում, «Քաղաքականություն» բաժին՝ 45%-ում, հրապարակումներ՝ 59.2%-ում, «Միջազգային հարաբերություններ»՝ 23%, հրապարակումներ՝ 53.9%:

**Գծապատկեր 19.1(բ).
Կայքերում թեմատիկ բաժինների և թեմատիկ բովանդակության
համեմատական տվյալները**




Ըստ կայքերում առկա նյութերի բովանդակության՝ կայքերի կեսից ավելին անդրադարձել են նաև մարզական, մշակութային և շոու բիզնես/ժամանց թեմաներին: Ինչպես միջազգային հարաբերությունների դեպքում էր, «Ժամանց և շոու բիզնես» բաժնի և թեմատիկ հրապարակումների միջև տարբերությունը նկատելի է՝ 28.3%-ը 50.3%-ի դիմաց: Հետաքրքրական է նաև, որ քաղաքական, տնտեսական, միջազգային հարաբերությունների և շոու բիզնեսի իրադարձությունների անդրադարձների տարբերությունը շատ փոքր է:

Գծապատկեր 19.1(գ).
Կայքերում թեմատիկ բաժինների և թեմատիկ բովանդակության
համեմատական տվյալները




Կայքում համապատասխան բաժնի և հրապարակումների թեմատիկ բովանդակության ամենամեծ տարբերությունը ուժային կառույցների գործունեության լուսաբանման միջև է. այդպիսի բաժին առանձնացված է կայքերի ընդամենը 7,3%-ում, իսկ նորությունների ծավալը 50.8% է: Այդ ցուցանիշը զգալի է նաև «Արտակարգ իրավիճակներ, հանցագործություններ» թեմաների համար (17.3%-ը 44%-ի դիմաց): Գիտությանը, կրթությանը, տեխնիկային բովանդակային տեսանկյունից անդրադարձել են կայքերի 36.1%-ը, իսկ որպես բաժին առանձնացված է 24.6%-ում: Մոտ ցուցանիշներ են ստացվել նաև «Մարդիկ, անհատներ» բաժնի և թեմատիկ նյութերի արժեքների միջև 20.9%-ը 36.6%-ի դիմաց:

**Գծապատկեր 19.1(դ).
Կայքերում թեմատիկ բաժինների և թեմատիկ բովանդակության
համեմատական տվյալները**



Կենդանական և բուսական աշխարհին որպես բաժին անդրադարձել են կայքերի 9.9%-ը, բովանդակային նյութերի տեսանկյունից առանձնացված է 22.5%: Հոգևոր կյանքի վերաբերյալ բաժին է առանձնացված կայքերի միայն 4.7%-ում, բովանդակային նյութեր՝ 16.2%-ում: Խիստ քիչ են հրաշքների, առեղծվածների վերաբերյալ և՛ բաժինները, և՛ բովանդակային նյութերը՝ 1.6% բաժին և 8.4% անդրադարձ: «Ապրելակերպ, ընտանիք, տուն, ապրուստ» բաժիններ առկա են կայքերի 6.3%-ում, բովանդակային անդրադարձ կատարել է 14.7%-ը:

Գծապատկեր 19.1(ե).
Կայքերում թեմատիկ բաժինների և թեմատիկ բովանդակության
համեմատական տվյալները




Դիտարկված ժամանակահատվածում հայոց ցեղասպանությանը, հայկական հարցին անդրադարձել է կայքերի 11.5%-ը, արցախյան հակամարտությանը՝ 26.2%-ը:

Համացանցի ներթափանցումը մարդկանց առօրյա գործունեության մեջ սկիզբ դրեց տարածության վերաբերյալ պատկերացումների փոփոխությանը: Մ. Կաստելսն այս առումով նշում է, որ «համացանցն ունի իր սեփական աշխարհագրությունը, այն ցանցերով և հանգույցներով կարգավորում է տեղեկատվական հոսքերը, գեներացնում է դրանք և ուղարկում տարբեր վայրեր: Սա տարածության միանգամայն նոր տարատեսակ է, որը բնորոշ է տեղեկատվական դարաշրջանին»:¹¹

Սույն հետազոտության շրջանակներում աշխարհագրական տարածվածության չափումը կատարվում է ըստ առցանց ՁԼՄ-ների նյութերի բովանդակության: Հիմք է ընդունվել այն հանգամանքը, թե որ տարածաշրջանին է վերաբերվում լրատվական միավորը: Տվյալները հաշվարկելիս դիտարկվել են միայն այն կայքերը, որոնք թարմացվել են հունիսի 2-ից 12-ն ընկած ժամանակահատվածում, չեն հաշվարկվել նաև այն կայքերը, որոնք ժամանցի, շոու բիզնեսի նորություններ, տեսահոլովակներ և ֆիլմեր են ներկայացնում:

¹¹ Кастельс М. Галактика интернет: Размышления об Интернете, бизнесе и обществе. /пер. с английского А.Матвеева, под ред. В.Харитоновой/, Екатеринбург, У-Фактория 2004, стр. 328.

Գծապատկեր 20.
Կայքերում նյութերի աշխարհագրական բաշխվածությունը



Կայքերի 94.8% անդրադառնում է Հայաստանի մայրաքաղաքում տեղի ունեցող իրադարձություններին, 97.8%-ում ՀՀ մարզերի վերաբերյալ տեղեկատվություն կա, 76.3%-ն անդրադառնում է արտասահմանում, իսկ 68.1%-ը՝ տարածաշրջանում (Վրաստան, Ադրբեջան, Պարսկաստան, Թուրքիա) ուշադրության արժանի դեպքերին և նորություններին:

Աղյուսակ 1-ում նշված է առցանց լրատվամիջոցների հաղորդած տեղեկատվության աշխարհագրական բաշխվածությունը՝ ըստ կայքերի տեսակների:

Աղյուսակ 1.
Տեղեկատվության աշխարհագրական բաշխումն ըստ լրատվամիջոցների պայմանականորեն առանձնացված տեսակների

	Աշխարհագրական բաշխվածությունը							
	Մայրաքաղաք		ՀՀ մարզեր		Տարածաշրջան		Այլ օտար երկրներ	
Լրատվամիջոցի տեսակը	Առկա է	Առկա չէ	Առկա է	Առկա չէ	Առկա է	Առկա չէ	Առկա է	Առկա չէ
Տեքստային	98%	2%	98%	2%	69%	31%	77%	23%
Հեռուստատեսություն	82%	18%	96%	4%	54%	46%	68%	32%
Ռադիո	100%	0%	100%	0%	80%	20%	100%	0%
Համակցված	100%	0%	100%	0%	100%	0%	100%	0%


Դիտարկված ժամանակահատվածում առցանց ՁԼՄ-ների 82% անդրադարձել է ՀՀ մայրաքաղաքին, մնացած 18%-ը՝ ոչ. սա պայմանավորված է նրանով, որ որոշ կայքեր միայն մարզային նորություն-

ներն են լուսաբանում:

Որպես լրատվական կայքերի կարևոր բնութագրիչ առանձնացվել է հրապարակված նյութերի տեղեկատվության աղբյուրի առկայությունը և առանձնահատկությունները: Կայքերի 2.6%-ում տեղեկատվության աղբյուրը հնարավոր չի եղել սահմանել՝ հեղինակի, աղբյուրի վերաբերյալ գրառման բացակայության հետևանքով: Գլխավոր համախմբության 20.4%-ը չի դիտարկվել այս հաշվարկումը, քանի որ կա՛մ դիտարկված ժամանակահատվածում չեն թարմացվել, կա՛մ այլ գործոններ են եղել (օրինակ՝ երկու կայք բացառապես օտարալեզու է): Այսինքն՝ կայքերի 23%-ը (44 կայք) չեն ներառվել գծապատկեր 21-ում:

Գծապատկեր 21.

Լրատվական նյութերի տեղեկատվական աղբյուրները




